ՋԻՆՍՈՎ ԱՂՋԻԿԸ

Ջինսի ծնկները ճղված, ուղեղը թափած, մի քանի քորոց քթին ու ունքերին կպցրած՝ ջահել աղջիկ է եկել մոտս ու առաջարկում է ջրի գնով մանկան սայլակ: Փոշմանում ես, որ կամ դու ես մարդ ծնվել, կամ սրա նմանները... Մի տեղ երեխա են գողանում, մեկ ուրիշ տեղ՝ երեխայի սայլակ: Եթե Աստված գազանին ձեռքեր տար, նա ավելի ազնիվ կլիներ, գողություն չէր անի:

Գազանը իր տարածությունը խախտողներին է պատժում, իսկ այս տեսակի մանր ու մեծ գողերը մտնում են ուրիշի տարածք, թալանում ու «մարդավարի» ապրում...

ՄԵՏՐՈՅՈՒՄ

Երեկ գործից ուշ դուրս եկա: Գործ ունեի: Կիսաթմրած էի, ոտքերիս վստահելով՝ հասա մետրո: Հասցրի վերջին ոոպեի վերջին գնացքին: Անշտապ տեղավորվելու ընթացքում նկատեցի, որ կինը մնաց նստարանին նստած: Անօթևան կինը թերթ էր կարդում: Չորս տակ ծալել էր, հարմարեցրել ձեռքերի մեջ ու կարդում էր: Զարմացա: Ամեն ինչ կորցրած մարդու ինչի՞ն էր պետք, թե ով ինչ է գտել: Կորցրել է և հանգիստ է: Գլորվել է ու ընկած տեղին հարմարվել: Կկարդա, մենք կշարժվենք, ինքը կքնի: Առավոտ շուտ կարթնանա, կգոհանա, որ թողել են՝ քնի...

ԳԱԼՅԱՆ

Գալյան շատ էր շտապում: Չէր երջանկացել: Դեմքի սառը միմիկան ետ չէր եկել: ...Հավատացրի, որ լավ կլինի, մեկին կձարի, անկողինը կտաքանա: Խոսքերիցս տաքացավ և գնաց:

Հավատացել էր: Ես հասցե չգիտեի, որ անձամբ մեկին ուղարկեի. իմ սրտի ցանկությունն էի ասել: Երևի պետք չէր այդքան համոզիչ ասել: Նա այսօր ինձ տեսավ ու շատ նեղված, վստահ քայլերով հեռացավ:

ՓԱԿ ԳՈՒՆԴ

Ինքնաթիռն ընթացքի մեջ՝ ես առաջինն եմ կանգնում, որ շուտ իջնեմ: Ուղեկցորդուհին զգում է, որ շատ լուրջ գործի եմ, աչքերիս միշտ անհանգստություն է տեսնում ու ինձ հասկանում: Միշտ առաջիններից եմ: Մանր-մունր տեղերում վազում եմ, որ հասցնեմ: Ինչին, ինչին հասցնեմ. եթե իմանայի...

Գիտեմ, որ ետ եմ մնացել, շատ եմ ետ մնացել: Տարածությունը կրճատում եմ՝ ինձ սուտ սփոփելով: Չեմ սիրում, որ ինձ սպասում են: Չեմ սիրում, որովհետև օտար են: Փող քիչ ունեմ: Իրենք էլ գիտեն, ես էլ: Այ դրա համար էլ շտապում եմ:

Կարո՞ղ է՝ ես արագ-արագ դուրս եմ եկել երջանկության հերթից, ու մինչև հիմա վազում եմ: Ոչ ոք չգիտի՝ ուր և ինչի համար: Ես էլ չգիտեմ:

Այսպիսին եմ՝ գլորվող փակ գունդ: